





891.550
Ա-52

ՀԻՄՆԱԿ 1961 թ.

Ի Ն Մ Ա Ք Տ Ա Բ Ը

Նկարներ
դ. ԿՈՐՈՒՅՈՎԻ



1313
A 21882

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՊԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԿՈՒՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ ԵՆԵՐԺԱՆ 1937

316

Յես վեց տարեկան էյի, յերբ հայրս ինձ տարա՛յվ մեր դշուղի (գյուղի) մզկիթին կից մաքատարը*):

— Յերբ դու չորս տարեկան, չորս ամսական և չորս որական էյիր, մենք քեզ մատուցարանով ու սուփրայով դպրոց ուղարկեցինք, — ասաց մայրս ինձ հրաժեշտ տալիս: — Այն ժամանակ դու բոլորովին փոքր էյիր, սիրտս ցավում եր քեզ համար, և մենք քեզ բաց թողեցինք, վոր դեռ խաղաս դու, վաղվզես: Իսկ հիմի, աշխատիր հասնել մյուս յերեխեքին: Հե՞ վոր նրանք չորս տարեկան հասակից են սովորում:

Յե՛վ ահա յես դպրոցումն եմ: Այն սենյակը, ուր սովորում էյին յերեխաները, բոլորովին նման չեր մեր ընդարձակ, լուսավոր և խաղաղ սենյակին: Դա մի նեղ ու փոքր սենյակ եր՝ յերկու դռներով: Մուտքի դուռը նեղ եր, ընդամենը մեկ փեղկից. ձմեռը, ցրտերի ժամանակ դուռն ամուր բռնում էյին: Յերկրորդ անկյունի դուռը բոլորովին փոքր եր, կես արշին լայնություն ուներ և յերեք քառորդ արշին բարձրություն: Ուսուցիչը լուսամուտի նման մի բան եր բացել աչք դռան վրա և թուղթ եր կպցրել, իսկ վորպիսով անձրեից ու ձյունից չքրքրվի, ձեթ եր քսել նրան: Զիթած թուղթը փողոցից բարձրացող փուչուց կեղտոտվել ու սևացել եր այն փալասի կտորի նման, վորով փակում են կաթսայի բերանը՝ փլավը յեփելիս:

* Մափտար — ուսումնարան, դպրոց: Մ. Բ.

Այդ փոքրիկ պատուհանի միջով լույսը հազիվ եր
ազոտ կերպով թափանցում: Ճիշտ է, սուստաղի
տակ ելի յերկու զույգ մանր — մեկ քառորդ արշին
մեծությամբ պատուհանիկներ կային, բայց նրանցից
լույսը վոչ թե հատակին եր ընկնում, այլ պատերի
վերևի մասերին:

Յերկայնքով ու լայնքով իրար վրա գցած յեր
կուական գերանները սենյակը բաժանում էյին իննր
բաժանմունքի: Այդ բաժանմունքները ախոռի նման
նեղ էյին: Փոքրիկ դռան մոտ, առաջին անկյունի «ա-
խոռը» ուսուցիչն եր գրավում, մուտքի դռան մոտի
ախոռում արեխներն էյին դնում. իսկ մնացածներում
նստում էյին յերեխաները: Այժմ յես չեմ հիշում, թե
քանի աշակերտ կար դպրոցում: Միայն հիշում եմ,
վոր այնտեղ սովորում էյին մեր գյուղի չորսից տասն-
յերկու տարեկան հասակ ունեցող բոլոր յերեխաները,
ինչպես և հարևան գյուղերի յերեխաներից շատե-
րը: Մեր զլլազը ասածուն լայեղ վայր եր համարվում,
ինչ-վոր ժամանակ այնտեղ «սրբեր» էյին ապրել: Իսկ
միայն մեր գյուղում, ինչպես ասում էյին, յերեք հար-
յուրյակ տուն կար:

Դպրոցը ինձ մեր փոքր հավանոցի նման բան թը-
վաց, ուր մայրս հավերին նստեցնում եր ձվերի վրա և
ուր սովորարար նստում եր թուխսը՝ փոված թևերի
տակ հավաքելով իր ճուտերին: Տարբերությունը մի-
այն այն եր, վոր մեր ճուտերը ծվծվում էյին դուրե-
կան ու բարակ ձայնով, իսկ դպրոցականները այնպիսի
ազմուկ ու աղաղակ էյին բարձրացնում, վոր ուղեյի-
չուղեյի պետք է ականջներդ փակեյիր:

Հայրս ինձ հետ մտավ դպրոց և ներկայացրեց
նվերները — մատուցարանի մեջ, սփռոց — դաստար-
խանի*) մեջ փաթաթած լավաչն ու քիչմիջը: Ուսուցի-

* Գաստարխանի Տաճկաստանում այն սփռոցին են ասում, վոր
շաշի ժամանակ փռում են դորգերի կամ խիրների վրա: Գաս-
տարխան է կոչվում նաև նրա վրա տված հյուրասիրությունը:

չը բացեց դաստարխանը, կտրեց լավաչը մի քիչ ինքը կերավ և հյուրասիրեց հորս: Մի պատառ ել հայրս կերավ: Ապա ուսուցիչը մյուս լավաչը բրդեց և փշրունքները շարեց յերեխաներին, այնպես, ինչպես հաղեբրին կուս են զցում:

Դպրոցում անմիջապես աղմուկ բարձրացավ, լավեցին չրխկոցներ, ապտակի շրպպոցներ և խալաթների խշխշոց: Բղավոցներից, ճչոցներից և վոռնոցներից թփում էր թե առաստաղն ողբ բարձրացավ: Ուսուցիչը ձեռքերը մեկնեց դեպի հետևը: Այնտեղ, նրա թիկունքի հետևում, պատին ցցված եյին զանազան յերկարության գավազաններ: Վերցնելով նրանցից մեկը— հինգ արջինանոց մի դազանակ, ուսուցիչը սկսեց նրանով խփել յերեխաների գլուխներին: Այդ դազանակից դուրսն ազատելու հնար չկար, նրա ծայրը հասնում էր դիմացի պատին: Յերեխաները դադարեցին կովելուց և բոլոր բերաններից միևնույն աղիղդորմ ճիչը դուրս թռավ:

— Վա՛յ, դոմուլլո, վա՛յ վարժապետ ջան, ել չենք անի...:

Այդտեղ ել չհամբերեցի ու յես ել նրանց հետ միասին սկսեցի լաց ու կոծ անել, թեև վոչ վոք ինձ չեր ծեծեւ: Հայրս սկսեց ինձ հանգստացնել: Նա խոստացավ ինձ մի քուռակ նվիրել, յեթե յես դպրոց գնամ և լաց չլինեմ: Իսկ ուսուցիչը ավելացրեց.

— Ամեն բազարի որ քեզ մի կտոր շաքար եմ տա-

յու: Հորս խոստումները չեյին կարող ինձ հաշտեցնել այդ տան հետ, վորը կարծես դիտմամբ շինված էր յերեխաներին տանջելու համար: Բայց ուսուցչի խոսքերը միանգամից հանգստացրին ինձ, քանի վոր նա անմեղներին դահճի նման ջարդում էր, իսկ ինձ շաքար խոստացավ: Յես իմ մեջ վճռեցի, վոր նա ինձ ձեռք չի տա: Բայց աչքս չեյի հեռացնում փայտերից, մանավանդ այն յերկար դազանակից, վորի ծայրը սենյակի ամենահեռավոր անկյունն էր հասնում:

Վերջապես յերեխաները մի քիչ հանդարտվեցին: Ուսուցիչը վերցրեց իր առաջ դրված փոքր գրատախտակներից մեկը, ինչ-Վոր բան գրեց նրա վրա և ցույց տվեց հորս: Հայրս, վոր դրագետ եր, նայեց գրատախտակին և ասաց, վոր սխալ է գրված: Ուսուցիչը վրձեց և չէր համաձայնվում հորս հետ, բայց հայրս էլ իր կողմից չէր զիջում: Վերջիվերջո հայրս հաղթեց և ուսուցիչը դեն չպրտեց տախտակի կտորն ու նեղացած ասաց .

— Դե վոր եղպես է, դուք սովորեցրեք...:

Այդ որվանից հայրս ինձ համար շատ խոշոր մարդ դարձավ: Յես մտածեցի վոր նա ավելի ուժեղ և խելոք է նույնիսկ ուսուցչից ել, վորին յես ամենախիմաստուն մարդն էյի համարում մեր զշխաղում: Այդ ինձ սրտապնդեց. յես մտածեցի, վոր հենց ուսուցիչը փորձի ինձ ձեռք տալ, կասեմ հորս և նա կքոթակի ուսուցչին:

Իսկ յեթե ուսուցչի խելքին փչեց դադանակ վերցնելու, հո՞ հայրս ել դադանակ ունի, վորոնցով քշում է գոմեչներին: Են ահադին գոմեչներն ել չեն դիմանում հորս դադանակին, պարզ է, վոր լղար, ծեր, փոքր գլխով ու կնճոռոված յերեսով ուսուցիչը շունչը կփչի հենց առաջին հարվածից:

Յերբ հայրս ուղղեց գրատախտակի վրա գրածը, ուսուցիչը ինձ հրամայեց նստել, ինքն ել նստելով ծալապատիկ, փոքրիկ գրատախտակը դրեց գերանին և ինձ ստիպեց կրկնել՝ «առ՛ւզու բիլլո՛» և «բիամբիլլո»^{*}): Այդ յես վաղուց էյի սովորել հորիցս և համարձակ ուժիբ կրկնեցի բոլորը և վոչ մի անգամ չչփոթվեցի, չկակաղեցի: Ուսուցիչը գոհ մնաց: Ինձ թվաց թե մյուս տղաներն ինձ նախանձով են նայում: Նրանք վախենում էյին ուսուցչի գավազանից, գլուխները վեր չէյին բարձրացնում և մատները աչքերի առաջ անկելով գաղտագողի իմ կողմն էյին ցույց տալիս: Յես մտածեցի, թե հենց վոր մենակ մնամ նրանք իրենց այդ մատներով իմ աչքերը կհանեն:

* «Առուզու բիլլո» և «բիամբիլլո» — աղոթքների անուններ են:

Ուսուցիչը կարդաց ազոթքը, յերեխաներն ասացին «ամմեն»:

Այդ իմ ուսման սկիզբն էր:

Հայրս վերադարձավ տուն, իսկ յես մնացի այդ սարսափելի վայրում:

II

Ուսուցիչը ինձ նստեցրեց իրեն մոտիկ և հասա-
կալոր յերեխաներից մեկին կարգադրեց սլարապել ինձ
հետ: Այդ տղան մատով ցույց տվեց գրատախտակն ու
ասաց՝ «ալիֆ, բե, տե, սե»: Դրանք առաջին չորս տա-
ռերի անուններն էլին: Յես մինչև սերտելս կրկնեցի
դրանք: Այն ժամանակ նա ինձ թողեց և գնաց ուրիշնե-
րի հետ սլարապելու: Յերեխաները այդ տղային կո-
չում էլին «խալիֆա՛» — ոգնական:

Շուտով ուսուցիչը դուրս գնաց: Այն ի՛նչ իրա-
բանցում էր, վոր բարձրացավ դպրոցում...: Բոլորը
վեր թռան տեղերից, սկսվեց սուր ու դժփոցը, ուժեղ-
ները վեր գցեցին թուլերին ու սկսեցին տրորել նրանց:
Այդպես անցավ կես ժամ: Հանկարծ խալիֆան վեր
թռավ տեղից, վերջրեց ուսուցչական յերկար գավազա-
նը և սկսեց յերեխաներին անխտիր խփել: Յես վախե-
ցա և ուղեցի փախչել դպրոցից: Բայց դուռը փակ էր
և նրա ողի մեջ փայտ էր խրված: Ինձ նման յերեխա-
ները առանց մեծեքի ոգնության չէլին կարող վոչ
դուրս գալ վոչ ներս մտնել:

— Տե՛ղդ, թե չե գլուխդ կջարգեմ, — բղավեց ինձ
վրա խալիֆան:

Յես վերադարձա տեղս, վիզս ծոցի ու աչքիս պո-
չով զննեցի խալիֆային:

Պավազանը արագությամբ վերականգնեց կարգը:
Յերեխաները նստեցին իրենց տեղերը: Այն ժամանակ
խալիֆան գոչեց՝

— Տղե՛րք, իսկ հիմի նետ արձակենք աղեղներից:

Ուրախության վոռնոց բարձրացավ:

— Աղէ՛ղ, աղէ՛ղ, նեո ենք արձակելու աղէ՛քք... :

Յերեխաները դպրոցի հասակին փոված խտիրներէց դուրս քաշեցին չոր ու հաստ ցողունները: Ամեն մեկն իր գրպանից բարակ ու յերկար թել դուրս հանեց, կապեց ճիպոտից և ձգելով կորացրեց: Ստացվեց մանկական փոքր աղեղ: Յերեխաները բռնեցին այդ աղեղներէ ինչպէս պահում են իսկական մեծ աղեղները, նետի տեղ մի ճիպոտ վերցրին, դրին թելի վրա, ձիգ ավին ու բաց թողեցին: Ճիպոտներն իսկական նետի սլես սլացան: Ելի սկովեց կռիվը: Ամեն մեկը նշան եր բռնում մյուսի յերեսին, քթին, աչքին...: Սկզբում կրովում եյին միայն մեկը մեկի դէմ, բայց հետո խալիֆան նորից վերցրեց փայտը, խփեց յերեխաների գլխներին և գոչեց.

— Հիմի պետք է կովենք խումբը խմբի հետ:

— Խումբը խմբի հե՛տ... աղաղակեցին յերեխաները:


Խալիֆան բոլոր յերեխաներին բաժանեց յերկու խմբի և ամեն մի խումբը կանգնեցրեց մի պատի յերկարությամբ: Խմբերից յուրաքանչյուրը բաղկացած եր յերկու շարքից—փոքրերը հեռեւում, մեծերը—առջևովում: Իսկ ինքը՝ խալիֆան կանգնեց պատի տակ, յերկու շարքի ծայրի կենտրոնում և հրահանգեց.

— Կրա՛կ:

Շարքերը զգաստացան, թելերը ձգվեցին և բոլոր աղեղներից միաժամանակ թուան նետերը: Յերկրորդ շարքի փոքր յերեխաները խտիրից նոր ցողուններ եյին հանում և պատրաստում առաջավոր շարքի համար:

Հանկարծ ինչ—վոր մեկի նետը թուով անցավ սենյակի մի ծայրից մյուսը և կզավ յերեխաներից մեկի աչքին:

— Վա՛յ աչքս... վա՛յ, նանի ջան, աչքս... գոչեց տղան և դուրս փախավ շարքից: Այդ գեպքից հետո նստընկերներն ավելի գաղազեցին: Նրանք սկսեցին զգգրդոված խտիրի ճիպոտները վերցնել և շարտել իրենց հակառակորդների վրա: Մյուս շարքը սարտքի տակ չնը





մնում, և ճիւղտոնները թափով յետ եյին դալիս: Ամբողջ սենյակը լցված էր փոշիով, աղբով, չոր ճիւղտոններով... Յես վախեցա, վոր ինձ վտանների տակ տրորեն, մտա ուսուցչի տեղն ու փայտի նման կանգնեցի այնտեղ:

Կռիվը շարունակվում էր... Բայց ահա դուռը հանկարծ ուժգին հրեցին: Մեկը վտաքերով վրդովված հարվածում էր դրսից և յես մտածում էյի, թե հիմի ուր վոր է դուռը կ'ջարդվի...:

Կատվի մլաժոցը լսած մկնների պես, յերեխաները թռան իրենց տեղերը և թաղնվեցին գերանների հետև, իրենց ախոռներում: Բայց գերանները ցած էյին և չէյին ծածկում նրանց: Նրանք ծռեցին գլուխները, ծածկեցին դեմքերը գերանների հետևում և այդ «գիրքերի» հետևից միայն նրանց կորացած մեջքներն էյին յերեկվում:

Դուռը շարունակում էյին ծեծել: Բայց վոչ վոք չեր համարձակվում բացել: Վերջապես, յերբ բոլորը սակվեցին իրենց ախոռներում, խալիֆան բացեց: Ներս ընկավ ուսուցչիչը: Կատարությունից նրա բեխերն ու մորուքը բիզբիզ էյին կանգնել, ինչպես շուն տեսած կատվի մագեր, իսկ աչքերը քիչ էր մնում, վոր դուրս պրծնեն իրենց բներից:

Ուսուցչիչը սենյակն ընկնելուն պես խլեց խալիֆայի ձեռքի փայտը և մի տասը-տասնյերկու անգամ հարվածեց նրա գլխին: Խալիֆան վազվզում էր սենյակում, ուրիշի խաղողի այգին մտած և այգեպանին պատահած շան պես: Բայց ուսուցչի յերկար դադանակը հասնում էր նրան սենյակի բոլոր անկյուններում էլ և շրխում էր նրա գլխին:

Քանի զեռ ուսուցչիչը ծեծում էր խալիֆային նրա գայրույթը մի փոքր իջավ: Նա մտալ իր ախոռը, տեսալ ինձ այնտեղ և ուղարկեց իմ տեղը: Բայց և այնպես այս անգամ էլ նա ինձ ձեռք չավեց, այլ նորից վերցրեց դադանակը և սկսեց հարվածել յերեխաների կորացած մեջքներին: Ամեն անգամ փայտը ցած իջնե-

լուց համարյա տասը յերեխայի միանգամից եր գիտը
չում և նրանք միարեբան աղաղակում ելին:

— Ել չեմ անի, վարժապետ ջան...:

Վերջապես ուսուցիչը բոլորովին հանդարտվեց և
ասաց:

— Կարգացե՛ք:

Յերեխաները ծեծված, մեջքները քորելով կռացան
գրքերի և գրատախտակների վրա և աչքների տակով
ուսուցչին գողեգող նայելով սկսեցին կարգալ բարձր,
ամբողջ կոկորդներով մեկ: Յես նույնպես կռացա իմ
տախտակի կտորի վրա և բղավեցի՝ «ալի՛Ֆ, բե, տե,
սե...»:

Ուսուցիչը խալիֆային կանչեց իր մոտ: Սա առանց
վորեկ վախի մոտ յեկավ: Յես շատ զարմացա խալի-
ֆայի քաջության վրա և իմ մեջ ել ցանկությունն ա-
ռաջացավ այնպես անվախ լինել, ինչպիսին նա յե:
Բայց հենց այդտեղ ել մտածեցի, յեթե բան ե յես ել
նրա պես արխատիրտ աղա դառնամ, ել ինչ ուզում ե
լինի, ուսուցչից չեմ փախչի, ինչպես խալիֆան եր
փախչում, դադանակը կխլեմ նրա ձեռքից և կհասցնեմ
հենց իր գլխին:

Ա՛խ, ափսոս, վոր փոքր եմ ու սիրաս լցված ե ա-
հով...:

Ուսուցչին ասաց խալիֆային:

— Դե՛, ասա տեսնեմ, ո՞վ ե սարքել այս աղմուկն
ու կռիվը:

Յերեխաները ընդհատեցին ընթերցումն ու ահով
լարեցին լսողությունները, տեսնեն խալիֆան ում ա-
նունն ե տալիս: Բայց ուսուցիչը նորից վերցրեց փայ-
տը և ստիպեց նրանց կարգալը շարունակել:

Յերը խալիֆան թվեց բոլոր մեղավորներին, ու-
սուցիչը գոռաց՝ «լու՛ր»: Յեվ յերեխաներն անմիջապես
լուեցին:

Մեղավորները մեկը մյուսի հետևից կանչվեցին:
Յերը ուսուցիչը սխալվում և կանչում եր մի անմեղի,
խալիֆան ուղղում եր:

— Չե, դա չի, այ ե՛ն...— և ցույց եր տալիս մի ուրիշի:

Այդպես, ուսուցչի առաջ հավաքվեցին տասը կամ տասյերկու յերեխա: Նրանք բոլորն էլ մեծահասակներից էին:

— Դուռը փակի՛ր:

Խալիֆան ծածկեց դուռը և փայտն անցկացրեց ողի մեջ:

— Վերցրո՛ւ Փալախկան:

Յես առաջ էլ լսել էյի Փալախկայի մասին, բայց դեռ չէյի տեսել այդ սարսափելի բանը:

Խալիֆան վերցրեց ուսուցչի գլխավերևը, պատեց կախված փայտը: Փայտը մոտ մեկ և կես արշին յերկարություն ուներ և մի քիչ ծռված էր. նրա յերկու ծայրերից պարաններ էյին կապված:

Այդտեղ յես առաջին անգամ իմացա թե ինչ բան է Փալախկան:

— Ահմեդ, դու դարձյա՞լ կռիվ ես արել, — հարցրեց ուսուցչիչը իր առաջ կանգնած մեղապարտներից մեկին:

— Վարժապետ ջան, ների, յես չեմ արել, եդ հո Մուհամմեդն էր, — պատասխանեց յերեխան:

Սակայն ուսուցչիչը վոչ մի ուշադրություն չդարձնելով նրա ճիչերի վրա, հրամայեց նրա մոտ կանգնած յերեխաներին.

— Պառկեցրեք:

Ահմեդին պառկեցրին: Առանց հապաղելու նրա վոտքերից կապեցին Փալախկայի պարանները: Յերկու յերեխա բռնեցին Փալախկայի ծայրերից և սկսեցին պտտեցնել: Պարանները ավելի ու ավելի ամուր վոլորվեցին, ձգվեցին և սկսեցին կտրել յերեխայի բորիկ վոտները: Ահմեդը գոռում էր.

— Վա՛յ մեռա... Վա՛յ ձեզ մատաղ վոտներս...:

Յերեխաները դադարեցին կարդալուց և վախից դողալով սկսեցին ականջ դնել նրա ճիչերին: Բայց ուսուցչիչը գործի դրեց իր դադանակը և նրանք նորից

սկսեցին բղավելով կարգալ իրենց դասը: Ապա ուսուցիչը վերցրեց յերկրորդ փայտը, վորը յերկու արշին յերկարություն կունենար, և մեկնեց խալիֆային ու հրամայեց.

— Խփի՛ր:

Խալիֆան սկսեց անողորմ կերպով հարվածել Ահմեդի վոտնատակերին, իսկ վոտքերը անց եյին կացված Փալախկայի մեջ և յերկու տղա ամուր բռնել եյին: Ահմեդը նորից ճչաց: Բայց նրա ձայնը գրեթե չեր լսվում, վորովհետև նրա շրջապատում յերեխաներն ամբողջ ուժով զովոտում եյին:

Փողոցով անցնողները հավանաբար չէյին ել գլխի բնկնի, վոր դպրոցում վորևէ մեկին ծեծում են: Նրանք միայն սովորական բարձրաձայն ընթերցանության ձայներ եյին լսում:

Խալիֆան այնքան հարվածեց, վոր Ահմեդի կրբունկներից դուրս ցայտեց արյունը: Այն ժամանակ ուսուցիչն ասաց.

— Հերի՛ք ե:

Խալիֆան դադարեց խփելուց: Փալախկան հանեցին վոտքերից: Ահմեդը չարությամբ նայում եր խալիֆային:

— Վերցրե՛ք Մուհամմեդին, — ասաց ուսուցիչը: Յերեխաները վայր գլորեցին Մուհամմեդին, վոտքերին հազցրին Փալախկան և վոլորեցին պարանը: Խալիֆան սրան ել այնքան ծեծեց, մինչև վոր մեղավորի կրբունկների վրա արյուն յերևաց: Այդպես պատժվեցին բոլոր տասնյերկու յերեխաներն ել: Յես նրանց բոլորին ել շատ եյի խղճում: Նրանցից վոչ մեկն ել խաղի պատճառ չեր յեղել, բոլորը սարքողը ինքը՝ խալիֆան եր, և հենց նա ել ընկերներին ուսուցչի ձեռքը տվեց: Յես շատ եյի ուզում ասել այդ բանն ուսուցչին, բայց վախենում եյի խալիֆայից:

Այնուամենայնիվ ուսուցիչն առանց ինձ ել գլխի բնկավ, թե ով ե գլխավոր մեղավորը: Յերբ բոլոր

կանչվածներն ել ստացան իրենց պատիժները, նա նա-
յեց խալիֆային և ասաց:

— Յես գիտեմ, վոր այս բոլորը քո՛ սարքած ոյխն-
ներն են:

Նա շուռ յեկավ դեպի պատժված յերեխաները,
վորոնք դեռևս կանգնած էին նրա առաջ: Հարվածնե-
րից մոմբում էին նրանց կրունկները և խեղճ յերե-
խաները շուտ-շուտ վոտքերը փոխում էին:

— Դեհ, մի շուռ տվեք սրան տեսնեմ, — ասաց ու-
սուցիչը:

Յերեխաները կարծես հենց դրան էին սպասում:
Նրանք գլորեցին խալիֆային, վրա թափվեցին, վոտ-
քերին Փալախկա հագցրին և սկսեցին վոլորել:

— Վա՛յ, շատ միք հուփ տալ, — գոռաց խալի-
ֆան, — վայ վոտներս կպոկեք կամա՛ց . . .:

Ո՛վ եր լաղը:

Ուսուցիչը յերեխաներից մեկի ձեռքը մի նոր փայտ
տվեց: Սա փայտն ստանալուն պես սկսեց հարվածել
խալիֆայի կրունկներին:

— Վա՛յ, — բղավեց խալիֆան, — վոնց կուղեք իւր-
եկեցեք, համա Փալախկան եղպես պինդ միք պտտի:

Բայց յերեխաները վոլորում ու ավելի և ավելի
էին ձգում պարանները:

Յերբ տղան մի քանի անգամ հարվածեց խալիֆա-
յի կրնկներին, ուսուցիչը դարձավ մի ուրիշ յերեխա-
յի և ասաց.

— Հիմի ել դու վերցրու փայտը, թող քո պարտ-
քը շահա մինչև ասեղ դատաստանի որը:

Հետո գավազանը յերրորդ յերեխան վերցրեց, հե-
տո չորրորդը, հինգերորդը, վեցերորդը: Այդպես
բոլորը, ում խալիֆան խփել էր, տվին իրենց պարտ-
քը, դեռ մի բան ել ավել:

— Դե ուրեմն, հերիք ե, — ասաց ուսուցիչը:

Բայց և այնպես յերեխաները դեռ բաց չէին
թողնում Փալախկան:

— Եւ ինչ եք ուզում, — սիրտներդ չհովացած՞ վ, —
հարցրեց ուսուցիչը:

— Ա՛ղ, — ասաց նրանցից մեկը:

— Ճիշտ ե, աղ... — կրկնեց ուսուցիչը և իր
գրպանները պտրտեց: — Ինձ մոտ աղ չկա, ձեզանից
մեկին ու մեկի մոտ չկա՞:

Բոլոր պատժվածները աղը տվին իրենց գրպան-
ները: Յերկու թե յերեք հոգի գրպաններից լաթի կը-
տորներ հանեցին, վորոնց մեջ աղ կար կապած:

— Տրորեցե՛ք, — կարգադրեց ուսուցիչը:

Յերեսաներն սկսեցին աղով տրորել խալիֆայի
ճաքճքված և արյունլվա կրունկները:

Խալիֆան դռում եր հորթի նման:

— Հերի՛ք ե, — ասաց ուսուցիչը:

Ֆալախկան քանդեցին: Խալիֆան կաղալով և
թեվքով աչքերի արցունքը սրբելով յերերում եք տե-
ղում:

— Սո՛ւս, — ասաց ուսուցիչը. դառնալով այն յե-
րեսաներին, վորոնք դեռ շարունակում էին ճղավել
վողջ հոկորդով:

Յերեսաները լոցեցին:

— Վաղը ամեն մեկդ ութ փուլի*) կրերեք խտրնե-
րի դիմաց: Բոլոր խտրները փչացրել եք այտոր:

— Կրերենք, կրերենք, — խմբով պատասխանեցին
յերեսաները:


— Աղատ եք, — ասաց ուսուցիչը:


Յերեսաները, բազեյի ճանկերից աղատված ճընճ-
դուկների նման, անմիջապես վեր թռան տեղներից և
նետվեցին դեպի դուռը: Բայց դուռը դեռ փակ եր:
Վերջապես խալիֆան վեր կացավ տեղից, կաղալով
մոտեցավ դռանը և բացեց: Առաջինը նա դուրս յե-
կավ, նրա հետևից իրար հրմշտելով և վայր ընկնելով
դուրս թափվեցին մյուսները: Յես բոլորից հետո

* փուլ, փուլի—պղնձե փոքրիկ դրամ, արժեք մոտ քառորդ
կոպեկ:

1313

A 21882





դուրս թափվեցին մյուսները: Յես բոլորից հետո
դուրս յեկա:

Յերեխաները խոնավել էյին դպրոցի բակում: Խա-
լիֆան նայեց նրանց և ասաց.

— Գնաք բարով:

— Դու ել գնաս բարով, — խմբով պատասխանե-
ցին նրանք:

Յերեխաները ցրվեցին: Սակայն դպրոցի յետեվ
մի անկյունում յես տեսա մի քանի մանուկների, վո-
րոնց այսոր ծեծել էյին: Նրանց մեջ կանգնած եր նաև
խալիֆան:

— Պատրաստվեցեք, վոր եզուց գնդակ ենք խա-
ղալու և լորերին կովացնելու յենք:

— Լավ, կպատրաստվենք, — պատասխանեցին
յերեխաները և ցրվեցին իրենց տները:

Մինչև վաղը մենք ազատ էյինք դպրոցից: Իմ
վոզջ կյանքում յես յերկու անգամ եմ ազատություն
ստացել: 1917 թվին, յերբ քառասուն յերկու տարե-
կան էյի, ճիպոտի յոթանասունհինգ հարված ուտե-
լուց հետո դուրս յեկա Նմիրի բանտից, դա յերկրորդ
ազատությունն եր իմ կյանքում: Իսկ առաջին ազա-
տությունը յես զգացել եմ վեց տարեկան հասակումս,
յերբ առաջին պարապմունքից հետո դուրս յեկա զըպ-
յեղա:

III

Յես վերադարձա տուն և մորս տեսնելուն պես լաց
եղա:

— Ինչ է պատահել, բալիկ, ինչի ես լաց լինում,
հարցրեց մայրս, բայց յես վոչինչ չկարողացա պա-
տասխանել: Վերջապես հայրս յեկավ:

— Դե, ասա մի տեսնեմ ինչ է պատահել, — խստու-
րամբ հարցրեց նա, — ասա՛, թե չե ականջներդ կկրտ-
տեմ:

Յես հեծկտանքով պատասխանեցի՝

— Են լակոտները կռիվ գրեցին... իրար հետ... :

— Դե վոր իրար հետ կովեցին, քե՞զ ինչ: Դու կը-
ռիվ չես արել, քեզ ել վոչ վոք չի ծեծել, ել ինչ ես
լաց լինում:

— Դոմալլոն նրանց ծեծեց...

— Շատ ել լավ ե արել: Կովարարներին կծեծեն:

— Յես ել դպրոց չեմ դնա:

— Հիմարություններ են. — խստությամբ ասաց
հայրս: Ապա մի քիչ լռելուց հետո հարցրեց.

— Իսկ ինչի չես դնա:

— Դոմալլոն ինձ կծեծի:

— Նա իրավունք չունի, նա չի համարձակվի ծե-
ծել: Յեթե ծեծի՛ յես նրա ականջները քոքից կկտրեմ:

Յեվ հայրս գրպանից հանեց դանակն ու ցույց տը-
վեց ինձ:

— Տե՞ս, ահա՛: Յեթե Դոմալլոն ծեծի՛ քեզ, հենց
ես դանակով եմ կտրելու նրա ականջները:


Յես ուրախացա և պատկերացրի ուսուցչիս ականջ-
ները կտրած ու նույնիսկ մտածեցի՝ «չատ լավ, թող
եղպես լինի, թող նա մի ինձ ծեծի՛»: Հորս կասեմ կգնա
դպրոց և տեղն ու տեղը կկտրի ականջները: Են ժա-
մանակ դե արի ու թամաշա արա ուսուցչիս... :


Մինչեվ այժմ կյանքումս ինձ վոչ վոք չի ծեծել,
բայց յերբ պատկերացրի, վոր ուսուցչիս դավազանք
կարող ե «չոյել» կրոնիկներս, վոտներիս տակերն
սկսեցին քոր գալ ու այրվել:

Յեվ այնուամենայնիվ յես շատ եյի ցանկանում
տեսնել ուսուցչիս առանց ականջների: Մեր հարևանին
անականջ մի եչ ուներ: Ամեն անգամ, յերբ տերը հեծ-
նում եր նրան ու քշում, յերեխաները ծափ եյին զար-
կում և հետևից գոռում.

— Անականջ եչ... եչ անականջ... :

Ինձ համար ել զվարձալի յեր տեսնել, թե ինչպես
են ձեռ առնում ու ջղայնացնում մեր հարևանին: «Ա՛խ
թե մեր ուսուցիչը կմնա առանց ականջների՛», — մտա-
ծեցի յես, — են ժամանակ յերեխաներն ել կտրվա





նման կռիվ չեն անիլ, քանի վոր ամբողջ ժամանակ մտիկ կանեն ուսուցչի ականջներին ու կուրախանան»:

Յեւ յես ասացի հորս.

— Թե վոր ուզում ես դպրոց գնամ, հենց հիմիկ վանից կարի ուսուցչի ականջները: Կկտրես— կգնամ, չե՞ս կտրի — չեմ գնա:

Հայրս պատասխանեց.

— Իսկ յես իշի քուռակը չեմ տա քեզ:

Այդտեղ յես նայեցի հորս ու ասացի.

— Շատ լավ, թող այդպես լինի. յեթե դու ինձ կտաս քուռակն իր լծասարքով — դպրոց կգնամ...:

— Լավ, բալա՛ս, — ծիծաղեց հայրս, — միայն թե լաց մի լինի ու իտեղք դպրոց գնա, — բոլորը կնվիրեմ:

Քուռա՛կ... ա՛յ, յեթե նրա վզին ժապաւի են կապեմ և զանգակն ու բոժոժներն ել կախ տամ, մի տեսեք ի՛նչ սիրուն բան դուրս կգա:

Նստիր նրա վրա, իսկ նա ականջները ցցած առաջ կսլանա: Կարծես իշով չես գնում, այլ թռչում ես ու դում, ամպերի միջով...:

Յես այնպես տարվեցի իմ իշուկով, վոր մոռացա դպրոցում տեղի ունեցած բոլոր անախորժությունները:

Յես սրբեցի աչքերս, մի կտոր հաց վերցրի և դուրս յեկա բակ: Մի ուռ կտրելով յես ձիավորի նստեցի ցեխաչեն ցածլիկ ցանկապատի վրա: Չեռքիս ճյուղը մտրակ դարձավ, իսկ պատը՝ իշուկ:

— Դե՛, հոչ, հո՛չ... — քչեցի յես պատին:

Յանկապատն ի հարկե տեղից չչարժվեց, բայց ինձ թվում էր, վոր յես առաջ եմ սլանում և սիրտս լցվում էր ուրախությամբ:

IV

Մյուս օրը առավոտյան յես դպրոց գնացի շատ վաղ, յերբ ուսուցչից բացի դեռ վոչ վոք չկար այնտեղ: Յես բարեվեցի նրան և ուզում էյի տեղս նստել, բայց ուսուցիչը կանգնեցրեց ինձ և հարցրեց.

— Խտիրի փողը բերե՞լ ես:

— Վոչ, մոռացել եմ...:

— Այդ վո՞նց ես դու գիտուն դառնալու, դու, վո՞ր մոռացել ես, թե հարկավոր ե խտիրի գինը տալ: Ես բոսպետիս վազիր հորդ մոտ փողը բեր:

Յես իմ տախտակի կտորը դրի գերանի վրա և դուրս վազեցի: Բայց դեռ չեյի հեռացել, յերբ առուցիչը կանչեց հետեվիցս.

— Սադրեդդին:

Յես վերադարձա և կանգնեցի նրա առաջ:

— Ձեռքերդ ծալիր, — ասաց նա դժգոհ ձայնով:

Յես կատարեցի նրա հրամանը — ձեռքերս ծալեցի փորիս վրա, բայց չգիտեյի այնպե՞ս եմ անում, ինչպե՞ս վո՞ր պե՞տ ե, թե՞ այլ կերպ են ծալում: Նա ձեռքը մեկնեց դեպի դադանակը: Յես վախեցա ու մտածեցի թե ուր վո՞ր ե հիմի կսկսի ծեծել և ճչացի.

— Ինձ ձեռք ավիր թե չե հերս ականջներդ կկտրի: Ուսուցիչը ծիծաղեց և ասաց.

— Վոչ, յես քեզ ձեռք չեմ տա: Յեթե չարություն չանես յես յերբեք քեզ չեմ ծեծի:

Նրա ծիծաղը սրտապնդեց ինձ, և սկսեցի սպասել նրա նոր հրամաններին: Նա կարճ զավազանները ավեց ինձ և ասաց.

— Առ տար շարտիր մեչետի մոտի ավազանի մեջ ու դնա հորդ մոտ փողը բերելու:

Ուսուցչի ծիծաղից, մեկ ել այն բանից, վո՞ր զըպրոցում այլևս զավազաններ չեն լինելու, յես ուրախացա: Այնպես վազեցի, վոր վտարերս հաղիվ եյին գետին առնում: Նախ փայտերը ավազանը գցեցի, ապա վազեցի տուն: Հայրս տաչում եր ջրաղացի աղը: Յես նրանից փող ուզեցի:

— Ինչքա՞ն ե հարկավոր:

— Ութ փուլի:

Հայրս պտրտեց գրպանները և ութ հատ պղնձյա փուլիներ հանձնեց ինձ: Յես դուրս վազեցի արհեստա-

նոցից, բայց կես ճանապարհից յետ դարձաւ և ասացի
հորս .

— Դո՞մալլո՞ն ետոր ուրախ ե, նա ասում է՝ յես
քեզ չեմ ծեծելու և նույնիսկ փայտերն ինձ տվեց, վոր
ջուրը դցեմ :

— Լավ, լավ, դե՞ս սովորի, — պատասխանեց հայ-
բըս :

Յես վաղելով վերադարձաւ դպրոց: Մյուս աշա-
կերտներն արդէն այնտեղ եյին:

Ուսուցիչը սկսեց հավաքել դրամները: Յես ուղե-
ցի հորս տված փողերը հանձնեմ ուսուցչին, բայց հի-
շեցի, վոր ձեռքերը պետք է կրծքի վրա պահել: Յես
ձեռքերս ծալեցի կրծքիս և ցույց տվի դրամները: Եւ
նորից ծիծաղեց:

— Փառք արարին, հիմի վոր քաղաքավարի տղա
ես դառել: Բայց յերբ փող ես տալիս, կարող ես և
ձեռներդ չծալել:

Այդտեղ յես բոլորովին համարձակ դարձաւ և աջ
ձեռքովս դրամը մեկնեցի ուսուցչիս, բայց ձախ ձեռքս
առաջվա նման թողեցի կրծքիս վրա:

— Աստված որհնի քեզ, գորանաս, դիտնական
կդառնաս, — ասաց ուսուցիչը, վերջրեց դրամներն ու
սկսեց աղոթք կարդալ:

«Ինչպէս յերևում է մեր ուսուցիչն ենքան էլ վաս
մարդ չէ, — մտածեցի յես ինքս ինձ, — փայտերը դէն
գցել տվեց, նույնիսկ ինձ համար աղոթեց էլ, թեև յես
փողը նրան տվի վոչ թե աղոթքի, այլ խտրի գի-
մաց»:

Ուսուցիչը նորից գրադվեց խտրի գինը հավաքելու
գործով: Ով առանց դրամի եր յեկել նա տուն եր ու-
ղարկում: Մի քանի յերեխաներ յերկրորդ անգամ դա-
տարկաձեռն վերադարձան և ասացին ուսուցչին, վոր
իրենց հայրերը խոստացել են առաջիկա բազարի որը
տան:

— Դե, վոր այդպէս է, յես ելնոր խտիրներ չեմ առնի
ձեզ համար, մինչև վոր բոլորը փողը չբերեն: Իսկ
հին խտիրները վառել եմ տալու: Ուրեմն սրանից հետո

չոր գեանին կնստեք ու կտեսնեմ ե՛լ ինչով եք խաղա-
լու:

Այդ խոսքի վրա իրենց բաժինը վճարած յերեխա-
ները սկսեցին հրճուել նրանց, ովքեր չեն վճարել
խօսիքների դինը:

— Հերզ ութ փուլիի համար մեռնո՞ւմ ե, ինչ ե:

Դե, վազիր բեր:

Յես նույնպես բարկացա այդ յերեխաների վրա և
մտածեցի, վոր նրանց հայրերը ժլատ ու ազատ՝ կլի-
նեն:

Բայց չե՞ վոր այն ժամանակ ութ փուլին քիչ փող
չեր: Հիշում եմ, մի անգամ մեզ մոտ հյուրեր յեկան,
հայրս իմ ձեռքը մի տոպրակ տվեց և մի թանգու —
իսկ թանգուն վաթսունչորս փուլի յեր — և ինձ ուղար-
կեց բրնձի վաճառական Շարիֆ-բեգի մոտ:

— Փողը կտաս իրեն, իսկ նա տոպրակդ յերկու
չափ բրինձ կլցնի, — պատվիրեց հայրս, — միայն տե՞ս,
նրան չասես թե մենք շիրքիրինջ*) ենք յեփելու, թե չե
վատ բրինձ կտա: Յեթե հարցնի թե ինչ ենք յեփելու,
ասա ոչ**): ենք յեփում, իսկ թե ինչ ոչ — չասես:

Յեթե այդ ժամանակ վաթսունչորս փուլիին տալիս
եյին յերկու չափ, այսինքն չորս կիլո լավ բրինձ,
դուրս ե դալիս, վոր ութ փուլիով կարելի յեր կես կի-
լո բրինձ առնել: Ուրեմն քիչ փող չեր ուսուցչի ուզա-
ծը:

Ուսուցիչը դեռ յերկար ժամանակ հավաքում եր
պղնձե դրամները և վիճում եր յերեխաների հետ: Վեր-
ջապես նա ասաց.

— Վեր կացեք, նախաճաշի ժամանակ ե:

Ի ուրբը աղմուկով վեր թռան տեղներից, դուրս

* Շիրքիրինջ — բրնձով քաղցր կաթնապուրի նման կերա-
կուր ե:

** Ոչ — տաճկաստանցիք ասում են առհասարակ ուտելիքին և
մասնավորապես իրենց սիրած կերակուրին — փլավին: Դրանից
ել ոգտվել և Սադրբեգինի հայրը, վորպեսզի վոչ ստի, վոչ ել
ճիշտն ասի:

վազեցին դռներից և, ինչպես յերեկ, հրաժեշտ տվին խալիֆային, ցրվեցին իրենց տները:

Յես նույնպես ուղեվորովեցի դեպի տուն: Կերա, մի քիչ խաղացի իմ փիսիկի հետ և նորից վերադարձա դպրոց: Ուսուցիչը դեռ այնտեղ էր, յերեսխաներն էլ մեկիկ-մեկիկ հավաքվում էին:

— Կարդացե՛ք, — ասաց ուսուցիչը, յերբ բոլորը հավաքվել էին և բարձրացրեց իր յերկար մահակը: Բոլորը միասին գոռգոռացին: Յես նույնպես սկսեցի գոռալ՝ «ալիֆ, բե, տե, սե...»:

— Դաս տո՛ւր, — դարձավ ուսուցիչը խալիֆային:

Խալիֆան յերեկվա հարվածներից կաղալով հերթով մոտեցավ յերեսխաներին և դաս տվեց: Ինձ հետ այս անգամ ինքը՝ ուսուցիչը պարապեց: Նա ինձ նստեցրեց իր դիմացը, գրատախտակը դրեց առաջս և ասաց.

— Դեհ, կարդա դասդ:

— Ալիֆ, բե, տե, սե, — պատասխանեցի յես առանց գրատախտակին նայելու:

— Ուղիղ է, փառք ալլահին, — ասաց ուսուցիչը և իմ գրատախտակին մի քանի նոր տառեր էլ գրեց, իսկ հետո ասաց ինձ.

— Հիմի կարդա ներքևվում գրածները, ասա ջիմ, յսե:

Յես նայեցի ուսուցչիս թոշնած ու կեղտոտ դեմքին, նրա անփայլ ու արտասովակալած աչքերին, այժի մորուքին, վորը նրա խոսելու ժամանակ ամբամբում էր, և նրա հետեվից կրկնեցի այդ նոր տառերի անունները: Յերբ այդ տառերը կրկնեցի մի քանի անգամ, ուսուցիչը հրամայեց.

— Դե, հիմի ինքդ կարդա:

— Ալիֆ, բե, տե, սե. — կարդացի յես:

— Վոչ, — ասաց նա. — ներքևվինը կարդա:

Բայց յես չգիտեյի թե վորոնք են վերեվինը և վորոնք են ներքևինը: Յես ձեռքերս փորիս վրա ծալած կանգնել ու նայում էյի ուսուցչին:

— Ասում եմ ներքևինը կարդա, — խատութ յամբ

կրկնեց ուսուցիչը: Այդ պահին նա ինչ վոր բան եր
գրում թղթի վրա: Հետո նա թուղթը դրեց հաստ
թղթապանակի մեջ, նայեց ինձ վրա, մի պահ լռեց և
ասաց:

— Յերևում ե, վոր դու դժոռ յերեխա ես: Յես
այսքան հալում եմ գլուխդ լցնում, իսկ դու վոչինչ
չես հասկանում:

— Ինչն եք հալում, — միամտաբար հարցրի յես:

— Զիմը, գենը, խենը:

— Եդ հո յես ել գիտեմ, — ասացի յես և արագ
կրկնեցի ջիմ, գե, խե... Դա հո յես լավ գիտեմ: Յես
մենակ չգիտեմ թե վորոնք են ներքևինը:

— Զիմը, գենը, խենը, հենց ներքևինն են, փառք
ալլահին: Գնա տեղդ նստիր ու դասիդ նայիր:


Նստեցի ու սկսեցի կրկնել՝ «Ջիմ, գե, խե, ջիմ,
գե, խե», ինչ ուշքս ուսուցչի կողմն եր, առանձնապես
չատ եյի նայում նրա այժի մորուսին:

Առաջ մենք մի այժ ունեյինք: Ամառը յես արածաց-
րի նրան և նա շատ չաղացավ: Բայց ահա յեկավ դաժան
ձմեռը, առուններն ու գետակները ծածկվեցին սա-
ռույցով: Զրադացները չեյին աշխատում և վոչ
վոք չեր գնում հորս շինած ակները: Յերկու ամիս շա-
րունակ մենք փող չունեյինք միս առնելու: Այն ժամա-
նակ հայրս վորոչեց մորթել այժին: Յես շատ եյի
խղճում այժին, լաց յեղա և խնդրեցի ձեռք չտալ
նրան: Բայց հայրս չլսեց ինձ, դանակը սրեց, այժին
ցած գլորեց և կապեց նրա վոտները: Մայրս բռնեց
այժին, վոր չթփրտա, իսկ հայրս կտրեց նրա վիզը:
Այժը մեռավ, աչքերը կիսով չափ խփվեցին, իսկ մո-
րուսը անկվեց վեր: Յերբ ուսուցիչը լուռ ե, նրա մո-
րուսը ճիշտ նույնպիսին և, ինչպիսին մեր մեռած
այժի մորուսն եր:

Բայց հենց վոր հիշեցի մեր այժի մասին, շատ տըխ-
րեցի և արցունքի մեջեց կրկնեցի՝ «Ջիմ, գե, խե, ջիմ,
գե, խե»:

Այդ պահին մեկը ձեծեց այն դուռը, վորի մոտ
նստած եր ուսուցիչը:





— Ո՞վ է, — հարցրեց ուսուցիչը թղթե լուսամուտը բացելով: Դռան հետևում Փարանջան հագին և մագեցանցը դեմքին քաշած մի կնոջ կերպարանք յերևաց: Նա ուսուցչին մի արծաթյա դրամ մեկնեց և ասաց.

— Վերցրեք այս՝ փոքրիկ զոհարերությունը և աղոթքներ տվեք գլխիցավի, ատամի ցավի, աչքերի ցավի և ծննդարերության ցավերի դեմ և բաց թողեք յերեխաներին:

— Մի թանգայի դիմաց չորս աղոթք: Դեռ յերեխաներին ել բա՞ց թողնեմ: Չե՛, այդպես չի լինի, բան չի դուրս գա, մի թանգա ել տվեք, — ասաց ուսուցիչը:

— Յես հեռու տեղից եմ յեկել, Որկենից, — պատասխանեց կինը, — ինձ ձեզ մտաե ուղարկել Շարոֆ-Բայը, նրա կինը շատ ե տանջվում, չի կարողանում ծնել: Ուրիշ հարեվան կանայք ել են աղոթք պատվիրել: Նրանք ասացին, վոր փող կճարեն, հարկից կթեթեվանան և ելի՛ կուղարկեն: Դուք տվեք աղոթքները, իսկ յերբ նրանք կհավաքեն դրամը, յես ինքս կրերեմ: Յեվ, ասածու սիրուն, յերեխաներին ել բաց թողեցեք:

Ուսուցիչը դրամը գրպանը խոթեց, առաջն ընկած հաստ թղթապանակից չորս կտոր թուղթ հանեց և տվեց կնոջը:

— Վո՞ր աղոթքը, վո՞ր հիվանդության դեմ է, — հարցրեց կինը:

— Ամեն աղոթքն ել ամեն հիվանդության կտրում է, — պատասխանեց ուսուցիչը, — դրանցից վորն ել վոր տալու լինեք հիվանդին՝ կլավանա:

Կինը վերցրեց աղոթքները և գնաց, իսկ ուսուցիչը, «ասածու սիրուն» բաց թողեց մեղ:

Իսկ մյուս առավոտյան, հենց նախաճաշից առաջ դպրոցի դռներին մտաեցավ մի ձիավոր:

— Դո՞մալլո, դո՞մալլո, — ձայնեց նա ուսուցչին: Առանց դպրոցից դուրս գալու և նույնիսկ դուռն առանց բացելու ուսուցիչը դռեց.

— Հա՛, ինչ եք ուզում:

— Որկենայում մարդ եմեռել, Շարոֆ-Բայի կնի-

կը մեռել ե, — գոչեց ձիավորն ու ձին քչեց մի այլ ուղղությամբ:

Ուսուցիչը մոռայլվեց: Չգիտես ինչու նա դիտեց վերցրեց չալման և դրեց գետնին:

— Ձեր աղոթքը անտեղի անցավ, դո՛ւ ալլո, Շարոֆ—Բայի կինը մեռավ, հը՞, — ասաց նրան խալիֆան ծաղրահան ժպիտով:

— Սրբապղծություն մի՛ անի, — ընդհատեց նրան ուսուցիչը, — անոգուտ աղոթքներ գոյություն չունեն, կինը իր անհավատությունից ե մեռել: Յեթե նա հավատ և հույս եր ունեցել — կառողջանար: Սոված է՝ «հավատա և կիրկվես»: Դե գնացեք նախաճաշի, — չառ յեկավ նա դեպի մեզ և դուրս յեկավ:

Յերեխաները սառն վազեցին ճաշելու, յես ել գնացի:

Մի ժամ անց յես վերադարձա դպրոց:

— Յերեխեք, յեկեք պայման կապենք, — ասաց խալիֆան:

— Ի՞նչ պայման, — հարցւինք խմբով:

— Ինչ ել վոր պատահի խաղի ժամանակ, թող վոչ վոք չգանգատվի ուսուցչին:

— Առաջ մի դու դադարի գանգատվելու՞ւց, — ասաց մեծ տղերքից մեկը:

Դեռ յերկու որ առաջ եր, վոր խալիֆան մատնեց այդ տղային և նա տեսալ ուսուցչի դադանակի համը:


— Իսկ հիմի վոչ դուք գանգատվեցեք և վոչ ել յես եմ գանգատվելու, — ասաց խալիֆան:


Հետո նա նայեց ինձ:

— Դու ել հորդ վոչ մի դեպքում վոչինչ չասես, — քո հայրը դրպարտիչ մարդ ե: Մի անգամ յես ձեր բակը մտա, վոր ծիրան դողանամ, նա համ հորս խաբար տվեց համ ուսուցչին և յերկուսն ել ծեծեցին ինձ:

— Լավ, չեմ ասի, — խոստացա յես, վորպեսզի ձեռ քաշի ինձնից:

— Իսկ յեթե ասես տղերքին կհրամայեմ քաբմուրդ անեն քեզ, այսինքն իշի նահատակ անեն:





— Չե, չե՛մ ասի, — կրկնեցի յես և վորոշեցի իսկապես վոչինչ չասել:

Յես շատ եյի վախենում քարմուրդից:

Մի անգամ վոնց յեղամ մեր գյուղը մի մաղդոք յեկամ: Դա սրբերի կյանքի մասին պատմություններ անող մարդ էր: Մերերը հարեվան գյուղն ինչ վոր տոնակատարության եյին գնացել, և մաղդոքի շուրջը հավաքվել եյին միայն յերիտասարդ տղերքն ու մանուկները: Մաղդոքն սկսեց պատմությունը: Յերբ պատմությունը հասավ ամենահետաքրքիր տեղը պահանջ դրեց.

— Տվեք ով ինչ կարող ե — հաց, փող, ձմերուկ, սեխ, չամիչ, ծիրանի չիր, և հետո յես կպատմեմ մնացածը:

Բոլորը վաղեցին տները և ամեն մեկը բերեց և մաղդոքին հանձնեց ինչ կարող էր: Յես ել իմ մորից մի բուռը չիր ուղեցի և տարա:

Մաղդոքը բոլորը լցրեց պարկն ու գցեց իշի վրա:

— Իսկ մնացածը հետո: Մյուս շաբթին կգամ, կպատմեմ, ասաց նա և դնաց իր գործին:

— Չե, հիմի պիտի պատմես — վերջացնես: Յեթե քիչ ենք հավաքել ելի՛ կրերենք, — խնդրեցին յերևիաները: Բայց և այնպես նա չհամաձայնեց և նստեց իշին: Բայց այդտեղ ինչ վոր մեկը գոչեց՝

— Քարմո՛ւրդ...:

— Քարմո՛ւրդ, քարմո՛ւրդ, — արձագանքեցին բոլորը միասին և կախվելով մաղդոքի իշից, ցած գլորեցին, վրաի տակ տվին ու սկսեցին դնգստել:

— Վա՛յ մեռա, — գոռաց մաղդոքը: — Բաց թողե՛ք ես բռպեյին պատմեմ:

Բայց ջահելները նրան խփում եյին հա խփում ու ասում.

— Լա՛վ: Մեր քարմուրդը քո հեքյաթից համով է:

Վերջապես մաղդոքը բոլորովին թուլացավ, նա արդեն գոռալ ել չեր կարողանում:

— Դե հիմի ել թրջվոց դնենք, տղերք, բարձրացրե՛ք:

Կիսամեռ մազդոքին քարշ տվին ու չպրտեցին մեր դյուղի միջով անցնող գետակի մեջ: Նրան մտցրին ջրի մեջ, ապա քաշեցին—ափ հանեցին: Նրա չալման մնաց ջրի մեջ: Մի պատանի բարձրացավ գետակի ափին բուսած ծառը, ճյուղից կախվեց ջրի վրա և վերցրեց — ափ նետեց մազդոքի չալման: Չալման խոթեցին պարկի մեջ, իսկ իրեն մազդոքին թաց խալաթով նստեցրին իշին և կենդանուն խոկեցին ճանապարհով:

— Դե կորիր — չբվիր, քո պատմությունն ել դու ել... գոչում եյին տղերքը իշին փայտով անխնա հարվածելով:

Դրանից հետո յես շատ եյի վախենում քարմուրդից: Այդ պատճառով ել յես անկեղծ սրտով ասացի խալիֆային.

— Չե՛, յերբեք վոչինչ չեմ ասի հորս:

— Հիմի յեկեք գնդակ խաղանք,—գոչեց խալիֆան:

Յերևի դպրոցում առաջ ել եյին խաղացել այդ խաղը: Յերեխաները վեր ցատկեցին տեղներից, քըրքըրված խաիրները չպրտեցին անկյունը և հողե հատակին փոսեր փորեցին՝ գնդակների համար:

Սաղն սկսվեց, —խաղում եյին ծիրանի կորիզների վրա:

Սորամանկները խաբում եյին միամխոներին, ուժեղները ծեծում եյին թուլներին և խլում նրանց կորիզները: Վորը լալիս էր, վորը բղավում, վորն ելտուր ու դմփոց էր սարքել: Սալաթները սլատառոտվում եյին:

Մի տղա մտտեցավ ինձ և ասաց.

— Սաղա թե չե քեզ կալլակուբակ կանենք:

Ինձ վոչ գնդակ ունեյի վոչ ել կորիզներ, ասենք խաղալ ել չգիտեյի: Մայրս վոչ խալաթիս, վոչ բլուզներիս վրա, վոչ մի տեղ գրպան չեր կարում:

— Յերեխան, վոր գրպան ունեցավ, գողություն կանի,—ասում էր նա: Փողոցով խաղալիքները ձեռքին գնալն ել չեր թուլատրում: Այդ պատճառով ել յես վոչ մի խաղ չգիտեյի:

Իայց կալլակուբակից յես վախենում եյի,—դա մի շատ վատ ոյին էր: Յերեխաներից մեկին նստեցնում է-

յին շրջանը հենտրոնում, վերցնում էյին թասակն ու յե-
ղունգներով այնպես էյին կտուտում նրա գլուխը, ինչ-
պես փայտփորիկը ծառի բունը: Յես չգիտեյի ինչ ա-
նեմ, ինչպես ազատվեմ կալլյակուրակից: Բայց այդ-
տեղ ինձ ոգնության հասավ խալիֆան:

— Թողեք դրան, թողեք նստի,—ասաց նա.— նրա
հայրը շատ վատ մարդ է:

Թեև ինձ դուր չեկավ, վոր նա իմ հորը վատ մարդ
անվանեց, բայց դրանից հետո, ով վոր մի փոքր հետե-
վիցս եր ընկնում—անմիջապես բղավում էյի խալի-
ֆային.

— Հեռացրու սրանց, թե չե ձեր բոլոր արարքները
կպատմեմ հորս:

Յեւ խալիֆան անմիջապես դասում եր յերեխանե-
րին:

Գնդակ խաղարկուց հետո խալիֆան դոչեց.

— Իսկ հիմի սկսում ենք լորերի կռիվը:

Մակայն յերեխաներն այնքան ել հոժար չեյին այդ
խաղին, քանի վոր միայն խալիֆան լոր ուներ, մեկ ել
մի ուրիշ տղա:

Ապա խալիֆան ասաց.

— Մենք մեր լորերը կկովեցնենք, իսկ դուք իրար
մեջ գրադի բունվեցեք կորիզների վրա, թե ում լորը
կհաղթի:

Այդ դուր յեկավ յերեխաներին, միայն շատերն
այլևս կորիզներ չունեյին—տարվել էյին գնդակ խաղա-
լիս:

— Այ՛, — վորոչեցին նրանք, — մենք տուն կվազենք
կորիզներ բերելու:

Մինչ յերեխաները տուն վազեցին, խալիֆան մնա-
ցածների հետ լցրեց փոսերը, խտիրները դրեց իրենց տե-
ղը, իսկ կենտրոնում մի դավի չափ տեղ մաքրեց:

Ետևով բոլորն ել վերադարձան և սկսվեց լորերի
կռիվը: Սալիֆան և յերկրորդ լորի տերը նստել էյին
իրաք գիմաց, մաքրած տեղի յերկու կողմերում: Նը-
բանց շուրջը տեղավորվել էյին մյուսները: Ով նստե-
լու տեղ չեք գտել, կանգնել եր հետեւում:

Խալիֆան և մյուս տղան պալատականերից Հանեցին
Իրենց լորերին, լիզեցին նրանց կառուցները, արորեցին
վտաները, թքով շփեցին նրանց ճանկերը և թքեցին
թեմերի տակ:

Խալիֆան ասաց իր հակառակորդին

— Քսան յես, քսան՝ դու,— պատասխանեց սա:

— Յերեսուն յես, յերեսուն՝ դու:

— Յե՛ս ինչքան, դո՛ւ ինչքան:

— Հիսուն յես, հիսուն՝ դու:

Վերջապես նրանք վորոշեցին՝ «հարյուր յես, հար-
յուր ել դու»: Դա նշանակում եր, վոր յեթե մեկն ու
մեկի լորը փախչի, նրա տերը հակառակորդին պետք է
տա հարյուր ծիրանի կորիզ:


— Դուք ել գրազ բռնեցեք, — ասաց խալիֆան
մյուսներին:

սներն սկսեցին վեճի մտնել: Վրժանք խալի-
ֆայի լորի համար եյին դնում, մտածելով, թե (իհար-
կե, պարզ է, վոր խալիֆայինը ուժեղ կլինի), ուրիշ-
ները նրա հակառակորդի լորի համար եյին դնում:
«Տասը յես, տասը դու», «հիսուն յես, հիսուն դու»,
«հարյուր յես, հարյուր դու», կանչում եյին յերեսու-
ները զանազան կողմերից:

Խալիֆան և իր հակառակորդը կովի ասպարեզ
բաց թողեցին իրենց լորերին: Յերկու լորերն ել մտա-
ները չուելով և վիզները ձգելով կովի մեջ մտան: Մեկը
մյուսի գլուխը կողահարեց, իսկ սա այդ ժամանակ
քաշքշում եր նրա փետուրներից: Առաջինն աշխատում
եր կառուցով խփել հակառակորդի աչքին, իսկ սա բռնել
եր նրա վզից և աշխատում եր գետին տապալել:

Շուտով անբախտ լորերի գլուխները ծածկվեց ար-
յան բծերով: Այն ժամանակ խալիֆան և իր հակառա-
կորդը վերցրեց ամեն մեկն իր լորին, շոյեցին, հար-
թեցին նրանց փետուրները և նորից բաց թողեցին
մարտադաշտը: Լորերը նորից սկսեցին զզզվել իրար:
Մի քանի ընդհարումներից հետո խալիֆայի հակառա-





կորդէ լորը շաց—ո՛ւշտ, ո՛ւշտ— և փախա՛մ: Խալի-
Փանի լորը հալածում եր նրան շրջանի մեջ:

Յերեխաները աղմուկ բարձրացրին, ծափ զարկեցին՝
հրձվանքից, սոււնցին, ճչացին:

Այդ պահին անսպասելի կերպով ներս մտավ ուսու-
ցիչը: Ուրեմն, յերբ յերեխաները տուն ելին վազել կո-
րիզներ բերելու, մոռացել ելին դպրոցի դուռը ներսից
փակել, և ուսուցիչը դասարան մտավ առանց դուռը
ձեծելու:

Քուրն ել այնպես ելին տարված լորերի կռվով,
վոր վոչ վոք չնկատեց թե ինչպես ուսուցիչը ներս մը-
տավ: Յես բոլորից շուտ տեսա ուսուցչին, վորովհետև
Խաղի ժամանակ մի աչքով լորերին ելի նայում,
մյուսով՝ դռանը, և յես տեսա թե ինչպես դռների մեջ
յերեաց ուսուցչի այծային մորուսը: Նա սուս ու փուս
ներս սողաց, գնաց իր տեղը և նստեց: Յե՛վ միայն այն
ժամանակ, յերբ նա վերցրեց փայտն ու սկսեց հար-
վածել յերեխաների գլուխներին, այդ պահին միայն
նրանք տեսան նրան:

Վերջապես ուսուցիչը հոգնեց խփելուց, տեղավոր-
վեց իր «ախոռում» և այնտեղից ասաց ինձ.

— Դու, յերեվում ե, վոր խելքով լակոտ ես:

Յերեխաները սակվել ելին իրենց տեղերում: Խալի-
Փան ցցվել եր ուսուցչի առաջ: Հավանաբար նա մտա-
ծում եր, վոր ուսուցիչը այս անգամ ել կհարցնի «մե-
ղավորների» անունները: Սակայն ուսուցիչը վոչ մի
բանի մասին չհարցրեց և ասաց.

— Վազիր գնա լճակից փայտերը բեր, վոր ի՞մ կար-
դազրությամբ պցել են այնտեղ: Նրանք հիմի լավ տողել
են և շատ լավ հարկավոր կգան ձեզ մարդավարի վարք
սովորեցնելու համար:

ԽալիՓան գնաց: Յերեխաներն ուռնու տերևների
պես դողում ելին: Միայն յես ելի հանդիստ: Չե՛ վոր
ինքն ուսուցիչն ասաց, վոր յես «խելքով լակոտ» եմ:

ԽալիՓան բերեց փայտերը և պցեց ուսուցչի առաջ:

Ամենից առաջ հենց իրեն վայր դրեք, — ասաց ու-
սուցիչն առանց հասպողելու:

Մեծ յերեսաներից մի քանիսը առաջ յեկան, խալիֆային ցած գլորեցին և վրաներին հազցրին Փալատիկան:

Նրա վտաքերի տակ դեռևս յերևում էին անցյալ ծեծի հետքերը:

— Խփի՛ր, — հրամայեց ուսուցիչը:

Յերեսաներից մեկը վերցրեց խալիֆայի բերած փայտերից մեկն ու հարվածեց նրա կրունկներին: Բայց հենց առաջին հարվածից փայտի կտորները դես-դեն թռան: Տղան վերցրեց յերկրորդ դավազանը, բայց սա էլ ջարդվեց առաջին իսկ հարվածից: Բոլոր փայտերը ջարդվում էին ու դես-դեն շարավում առանց խիստ ցավեր պատճառելու խալիֆային:

Ուսուցիչը փրփրեց, վերցրեց ջարդված փայտերը, գննեց և սասց.

— Այն փայտերը, վոք իմ կարգադրությամբ լճակն էին գցել թուփի փայտեր էյին: Նրանք յերբեք չէին ջարդվի, մանավանդ, վոք մնացել են ջրի մեջ: Այդ անպիտանը նրանց փոխարեն ուռի չոր փայտեր և թրջել ու բերել:

— Գնա հենց հիմա լճակից բեր իմ փայտերը. — կարգադրեց նա խալիֆային Կափոզ տղային:

Տղան դնաց: Խալիֆայի վտաքերը առաջվա պես դեռ մնում էին Փալատիկայի մեջ:

— Լճակում փայտեր չկան. — հայտնեց տղան վերադառնալով:

— Պարզ և, — սասց ուսուցիչը, — այդ սրիկան պահել և իմ փայտերը: Վոչինչ, յես թուփի փայտերի տեղակ նունենուց դադանակներ կչինեմ: Իսկ նրա հետ յես հենց հիմի իմ հաշիվը կմաքրեմ: Ծուռ տվեք դրան ու պառկեցրեք յերեսի վրա, — հրամայեց նա խալիֆային չրջապատող յերեսաներին:

Յերեսաները Փալատիկան հանելով խալիֆային շուռ տվին յերեսի վրա: Ուսուցիչը վերցրեց իր գավազանը և ինքն սկսեց խփել նրա մեջքին: Բայց և այնպես խալիֆան չորեքթաթ անելով և տեղում պատվելով

հնարավորութիւնն չեր տալիս ուսուցչին կարգին ծեծելու: Այն ժամանակ ուսուցիչը հրամայեց յերեխաներին խալիֆային ամուր սեղմել և կայցնել հատակին: Այգտեղ խալիֆան դռաց.

— Զգո՛ւյշ, լորին կսատկացնեք:

— Ահա թե ի՛նչ... ուրեմն նրա մոտ լոր և՛ կա, — հարցրեց ուսուցիչը, — մի դտեք, ինձ ամէք, տեսնեմ այդ ինչ լոր ե:

Տղերքը արագությամբ ձեռքերը խոթեցին խալիֆայի պայուսակը, լորը հանեցին և հանձնեցին ուսուցչին: Սա առանց յերկար-բարակ մտածելու, վարորեց և պոկեց թռչնիկի վիզը:

Խալիֆան դռաց.

— Ահմեդին ել լոր ունի, բա ինչո՞ւ նրանն ել չեք սպանում:

— Ահմեդի լորն ել դտեք, — հրամայեց ուսուցիչը:

Յերեխաները բաց թողեցին խալիֆային և ընկան Ահմեդի վրա: Խալիֆան ել վեր կացավ գետնից, ձեռքը կոխեց Ահմեդի պայուսակը, հանեց լորն ու իջ ձեռքով ամէց ուսուցչին:

Այդ լորին ել նույն բախտը վիճակից:

— Կորե՛ք, — ազա՛տ եք... եզուց եմ ծեծելու, — գայրացած դոչեց դոմուլլան և ավելացրեց.

— Վազը հինգշաբթի յե, չմոռանաք հետներդ բեռնել հինգշաբթու հացը:

Իրար հրելով մենք դուրս վազեցինք դպրոցից: Ճանապարհին յերեխաները սկսեցին հաշվել, թե ո՛վ ինչքան կորիզ է տարել, ո՛վ ինչքան է տարվել: Տանողները պահանջում էին իրենց հասանելիք կորիզները, սրանք ել չեյին տալիս:

— Լորերը հո սատկել են, ել ի՞նչի համար տանք:

Բոլորը խառնվեցին իրար ու սկսեց տուր ու դրմնոցը: Իսկ խալիֆան և Ահմեդը հանեցին խալաթները, ի կողմ քաշվեցին և սկսեցին կովել ընդունված բոոր կանոնների համաձայն:

Իսկ յես վազեցի տուն:

Յես առաջվա նման դպրոց էյի գնում: Յերեխաները առաջվա նման աղմկում էյին և կուլում: Բայց չընայած աղմուկին ու անկարգություններին, յես մի քանի շարժում սովորեցի արարական այբուբենի բոլոր տառերի անունները: Ինձ հետ յերբեմն խալիֆան երպարապում, յերբեմն ինքը ուսուցիչը: Հետո սկսվեցին «գերի և զարարի» պարապմունքները: (Ձեր, զարար և պեչ կոչվում են այն նշանները, վորոնք դրվում են տողի գլխին և տակին ա, ի, ու հնչյունները նշանակելու համար): «Ձերի և զարարի» դասերն ավելի հետաքրքիր էյին, քան տառերը սովորելը: Ինձ ասում էյին՝ «ալիֆ զարար—ա, ալիֆ գեր—ի, ալիֆ պեչ ու»: Յեւ յես յերկարացնելով կրկնում էյի՝ «ալիֆ զարար—ա՛, ալիֆ գեր—ի՛, ալիֆ պեչ—ո՛ւ»: Այդպես յես սովորեցի այդ նշանները՝ արարական այբուբենի բոլոր տառերի հետ: Հետո յեկավ յերկու զարարի, յերկու յերկու գերի և յերկու պեչի հերթը: Ինձ սովորեցնում էյին՝ «ալիֆ յերկու զարար նշանակում է ան, յերկու գեր—ին, յերկու պեչ—ուն»: Այդ դասերն ինձ էլ ավելի գուր յեկան: «Ալիֆ յերկու զարար—ա՛ն, ալիֆ յերկու գեր—ի՛ն» — դա հնչում եր, վորպես իսկական յերգ:

Յուրաքանչյուր նոր դասի համար ինձ նոր դասական գրատախտակիկ էյին տալիս: Բայց ուսուցիչը նրա վրա յերբեք չեր գրում:

—Քո հայրը կույարար մարդ է, նրա կարծիքով յես վատ եմ գրում: Ասա իրեն թող քեզ համար ինքը գրի ինչ վոր հարկն է,—ասում եր նա և ինձ ուղարկում հորս մոտ: Հայրս ել գրում եր:

Տարվա վերջին յես անցա արջադային, այսինքն սիսեցի կարգալ վանկերով, բայց այդ դասերն ինձ բուրբովին դուր չեկան: Ինձ սովորեցնում էյին.

— Ասա՝ ալիֆ և բե զարար—աբ, ջիմ և գոլ զարար—ջադ: Աբջադ:

Վանկերով կարգալը դժվար եր:

Մի անգամ հայրս ինձ ասաց.

— Այժմ, յերբ դու սկսել ես սովորել վանկերը, յես քեզ ցույց կտամ սովորածդ այբուբենը. կրկնի՛ր: Նա իմ առաջ դրեց գրված տախտակի կտորները և սկսեց հերթով հարցնել տառերը.

— Սա վո՞ր տառն է: Իսկ սա՞ վորն է...:

Յես լուռ եյի, քանի վոր վոչինչ պատասխանել չէյի կարող: Յես նույնիսկ չգիտեյի, թե ինչի մասին է նա ինձ հարցնում:

Հայրս դայրացայլ:

— Վերջապես եսքան ժամանակ ի՞նչ բանի ես յեղել ուսումնարանում:

Յես սկսեցի կրկնել, այն ինչ սովորեցրել էյին վանկերի դասի ժամանակ.

— Ալիֆ և բե դարար—ար, ջիմ և դոլ դարար—ջադ: Արջադ...:

— Ե՛ր բալա՛մ, իսկական թուխակ ես... ասում ես՝ բայց թե ինչ ես ասում— ինքդ ել չգիտես... — ասաց հայրս:

Յես այն ժամանակ մտածեցի, վոր թուխակ կոչվածը պետք է վոր շատ վատ բան լինի: Միայն հետո յես իմացա, վոր թուխակը գեղեցիկ և խելոք թուչունն է:

Հայրս խուզարկեց պայուսակս, գտավ հին գրատախտակիկները, վորտեղ գրված էյին այբուբենի գերի և զարարի դասերը: Նա սկսեց մատով ցույց տալ այդ սև նախշերն ու հարցնել.

— Իսկ սա ինչ է: Իսկ սա՞...:

Յես նորից վոչինչ չկարողացա պատասխանել: Բայց և այնպես, յերբ հայրս ցույց տվեց ինձ այդ գրատախտակիկները ու ասաց՝ «կարդա՛», — յես անդիր կրկնեցի բոլորն ինչ գրված եր այնտեղ, և նույնիսկ այնպիսի բաներ, վոր չէյին գրված:

— Այո, դու իսկական թուխակ ես, — նորից ասաց հայրս, — քո ուսուցիչն ու խալիֆան են մեղավոր: Նրանք ստիպել են քեզ անոգուտ անդիր անել, բայց վոչինչ չեն սովորեցրել: Ձեր ուսուցիչը անգրագետ ու քոս

մարդ է, իսկ յես, քոռից սուր աչք եմ պահանջում: Յես եմ հիմարը. ետոր չգնաս դպրոց...:

Յես շատ ուրախացա. վանիկեր կարդալն ինձ շատ էր ձանձրացրել:

VI

Հայրս իր մոտ հրավիրեց քաթիրին, մութթավալուն և մուսազուն* ու մի քանի ծերունիների: Յերեկոյան նըրանք յեկան: Դաստարախանը փռեցին, շիրքերին շտամանները շարեցին վրան:

Պետք է ասել, վոր միշտ, յերբ մեզ մոտ հյուրեր էյին գալիս, մեր տանեցիք վոչ թե փլավ էյին յեփում, ալ շիրքերինջ: Հայրս ասում էր մորս.

— Փլավին շատ է յուղ դնում, դեռ միս ել է հարկավոր, իսկ շիրքերինջը եթան է, միայն մի քիչ բրինձ կառնենք, դե կաթն ու մի դդալ յուղն ել վոչինչ, կովը տանիցն է:

Բայց ամեն անգամ, յերբ ինձ ուղարկում էյին խառութ բրինձ առնելու, հայրս սովորեցնում էր.

— Չասես թե շիրքերինջ ենք յեփելու հա՛, թե չեփատ բրինձ կտան:

Մի անգամ յես հարցրի.

— Ասեմ փրա՞վ ենք յեփում...:

— Վոչ, — պատասխանեց հայրս, — դա սառլոստություն կլինի: Չսովորես խաբելը: Վոչինչ մի ասի:

Յեվ ահա, յերբ հյուրերը շիրքերինջը կերան, լիդեցին — մաքրեցին ամանները և սկսեցին թեյ խմել, հայրս դիմեց քաթիրին.

— Յես նեղություն եմ տվել ամենահարգելի մարդկանց, նրանց հրավիրել եմ այստեղ, վորպեսզի մի քիչ խոսենք մեր ուսուցչի մասին:

*) Քաթիր, մութթավալի և մուսազին — մուսուլմանական կրօնական պաշտոնյաներ են:

— Ե՛, ի՞նչ է պատահել, — դժգոհ ձայնով հարցրեց քաթիբը:

— Բան չի պատահել, միայն մարդն անդրազետ է, — ասաց հայրս, — նա նույնիսկ տառերը գրել չգիտի, ենպէս վոր իմ աղի տախտակի կտորների վրա յես եմ գրելիս յեղել:

Մութաւալին ասաց.

— Թե վոր իր իմացածն էլ սովորեցնի մեր գյուղի յերեխաներին, եղ ել հերիք է: Մեր գյուղում վոչ վոք միտք չունի իր աղայի՞ն իմաստուն մարդ դարձնի:

Հայրս տարուրերեց գլուխը:

— Մեր ուսուցիչը չի կարողանում յերեխաներին սովորեցնել նույնիսկ այն, ինչ ինքը գիտի: Իմ յերեխան ամբողջ ձմեռը սովորել է, հասել է արջաղին, իսկ յեթե գրես «ալիֆ» և «բե», չի կարող ասի վո՞րն է «ալիֆը», վորը «բեն»: Հետո՝ ուսուցիչը ամենևին ուշադրություն չի դարձնում, թե ինչ բանի յեն մեր յերեխեքը: Բոլորն էլ լոր խաղացող են դառել:

Յես հասկացա, վոր հայրս գիտի մեր խաղերի ու շարությունների մասին, և խիստ վախեցա: Յես մտածեցի, վոր յեթե խալիֆան իմանա մեր այդ խոսակցության մասին, ինձ քարմուրդ կանի: Նա անպայման կը կարծի, վոր յես եմ հորս պատմել մեր դպրոցական խաղերի մասին:

— Յեթե դուք մեր ուսուցչից ավելի գրագետ եք և յեթե դուք ավելի լավ կսովորեցնեք, ավելի լավ ե ինքներդ սովորեցնեք ձեր յերեխային: Ել ինչ կարիք կա հինգշարթու հաց և ուրիշ բաներ տալու ուսուցչին: Իսկ ուսուցչին իրեն տեղը հանգիստ թողեք և մարդու հացը մի՛ք կարի, — ասաց քաթիբը:

Հայրս պատասխանեց.

— Ինձ մի կտոր հող ունեմ, պետք է վար ու ցանք անեմ վոր պահեմ ընտանիքս: Պարսպ ժամանակ ջրադացի ակներ պիտի շինեմ: Բացի դրանից ձմեռը յերեխանց համար շորացու եմ գործում: Յեթե յես գործս

Թողած յերեխին դաս տամ, բա ո՞վ է աշխատանքս տնելու:

Հայրս կնճռոտեց ճակատը, մի փոքր լուեց և սպա ծիծաղեց ու նայեց քաթիրին:

— Ծիչան ասած յես ձեզ հրավիրել եմ, վոր խոսենք ուսուցչին վոնդելու մասին և նրա տեղը մի ուրիշ լավը ճարենք: Ե՛հ, վոր համաձայն չեք գոնե ինձ համար մի վորեւէ գործ կատարեցեք, վորպեսզի իմ շիրբիրինջն անտեղի չանցնի:

Հայրս մի սովորություն ունեց, վորը շատ մարդկանց դուր չէր գալիս: Ինչ վոր սրտումը կար ասում էր բոլորին ուղղակի, առանց վորեւէ մեկից քաշվելու: Յե՛վ ահա հիմա ել նա ծերունիներին ուղղակի ասաց թե ինչի յե հրավիրել նրանց: Բայց վորպեսզի հյուրին չվիրավորի այդ բոլորը նա ասաց ժպտալով:

— Դե՛, ասացեք տեսնեմ ինչ անեմ, վոր հանդիստ սրտով մարսեմ քո տված շիրբիրինջը, հարցրեց քաթիրը:

— Թողեք իմ յերեխեն սովորի ձեր տանը աղջիկները հետ, բիրեխալիֆայի մոտ:

— Վո՞նց կարող ենք տղային խառնել աղջիկներին, — հարցրեց քաթիրը:

— Դա դեմ չի լինի մուսուլմանական որենքին, — պատասխանեց Հայրս, — իմ յերեխան դեռ յոթ տարեկան է, իսկ ինչ վերաբերում է որենքին, ապա որենքը թույլ է տալիս, վոր սղան մինչև տասնյերկու տարեկան դառնալը աղջիկների հետ լինի:

Քաթիրը մտածեց—մտածեց և վերջը համաձայնեց:

— Լավ: Ուղարկեցեք թող սովորի: Միայն մեռչուտ—չուտ կանչեցեք շիրբիրինջ ուտելու:

Յե՛վ նա ել ծիծաղեց:

Դրանով ել վերջացավ խոսակցությունը: Յես ուրախ էյի, վոր այլևս չեմ գողալու խալիֆի ու նրա քաղամուբղի ահից:

Մյուս ուրը մայրս ինձ տարավ բիրի-խալիֆայի
 դպրոցը: Բացի լավաշով և քիչմիշով լցված սկուտեղից
 մայրս հետը վերցրել էր նաև թաշկինակ ու թասակ:

Բիրի-խալիֆան մեր քաթիրի կինն էր: Ինքը քա-
 թիրը Դարվազայից էր, իսկ նրա կինը—Գեջդուվանից:
 Բիրի-խալիֆան միջին տարիքի կին էր, սպիտակ
 դեմքով, գեր մարմնով և մեծ փորով:

Յերբ մենք մտանք նրա մոտ, նա վոսները ծալած
 նստել էր սենյակի առաջին սնկյունում, վերմակների
 ծալքի վրա:

Սենյակում, թաղիքների վրա նստոտել էյին աղ-
 ջիկները:

Այդտեղ գերաններ չկային դպրոցի նման: Յուրա-
 քանչյուր աշակերտուհու առաջ դրված էր բամբակյա
 մզղակած մի բարձ, վորի վրա աղջիկները կարգալիս
 դնում էյին իրենց գրքերը:

Բիրի-խալիֆան իմ մորը շատ սրտաբաց ընդունեց:
 Նա բարեկեց, հարցրեց մորս առողջության ու գործերի
 մասին, ապա ծիծաղեց և ասաց, վոր ինձ պետք է սո-
 վորեցնի իմ հոր շիրբիրինջի համար և վերջում ավե-
 լացրեց:

— Իսկ յերբ ձեր վորդին հասնի թաբթին*, դուք
 ինձ համար ել մի քերեղա** շիրբիրինջ բերեք:

— Թե վոր ասծու կամքով ապրեցինք մինչեվ եդ
 ուրը, վոր թե շիրբիրինջ, այլ փլավ ել կրերեմ, —պա-
 տասխանեց մայրս:

Բիրի-խալիֆան բացեց դաստարխանը, պատառ-
 պատառ արավ լավաշը, և դամալլոյի նման մի մասը
 առանձնացրեց աշակերտուհիների համար, բայց սա
 հացի կտորները չչպրտեց յերեխաների առաջ, ինչպես

* Թաբթաբը—մուսուլմանների սուրբ գրքի—Ղուրանի գլուխ-
 աներից մեկի անունն է:

** Քերեղան—կավե խոր արտ:

մեր ուսուցիչն արավ, այլ տվեց իր խալիֆա-աշակերտուհուն — ամենից մեծ աղջկան, իսկ սա բաժանեց ամեն մեկին մի կտոր: Ի միջի այլոց, հացի մեծ մասն ինքը՝ խալիֆա-աշակերտուհին կերավ:

Սկսեցին աղոթք կարդալ: Բիրի-խալիֆան ստիպեց ինձ ասել «բիամրիլլո» և «աուզու բիլլո», և դրանով ել վերջացավ ամբողջ արարողությունը: Մայրս գնաց, իսկ յես մնացի աղջիկների դպրոցում: Այսպես սկսվեց իմ ուսումը յերկրորդ անգամ:

Բիրի-խալիֆան ինձ դաս տվեց այբուբենի մեջտեղից, սկսած «սին» տառից, մինչ ուր հասել էյի յես մզկիթին կից դպրոցում: Նա այնպես չեք սովորեցնում, ինչպես դոմուլլոն: Նա ձեռքին մի ձող էր բռնել և նրանով ցույց էր տալիս տառն ու հետն ել տալիս էր այդ տառի անունը: Այնուամենայնիվ նոր ուսուցչուհին ել չեք հետաքրքրվում՝ յես հասկացա՞ թե վոչ:


Բիրի-խալիֆան շարունակ դրադված էր: Նա հերթով կանչում էր իր աշակերտուհիներին և դասեր էր տալիս: Այդպես անցավ ամբողջ ուրը:

Մենք բիրի-խալիֆայի մոտ պարապեցինք առաջույան թեյի ժամից սկսած մինչև կեսոք: Ժամը 12-ին բիրի-խալիֆան վերջացրեց պարապմունքները, և աղջիկները նախաճաշեցին: Նրանք հենց այդտեղ, դպրոցում կերան հետները բերած լավաշները: Յուրաքանչյուրն իր լավաշի կեսը տալիս էր բիրի-խալիֆային: Առաջին ուրը յես առանց հացի էյի յեկեկ, բիրի-խալիֆան ինձ տվեց աղջիկներից մեկից ստացած լավաշի կտորը:

— Այսօր յես եմ քեզ հյուրասիրում, իսկ վազր դու ավելի հաց կրերես և ինձ շատ կտաս:

Նախաճաշից հետո աղջիկները մաքուր ավլեցին բիրի-խալիֆայի տունն ու բաղը: Յերբեմն բիրի-խալիֆան հարկադրում էր յերեխաներին լվացք անել, և պատահում էր, վոր նույնիսկ յես ել էյի ողնում լվացքին:





— Սովորիր լվացք անելը, —ասում էր նա, —կմե-
ծանաս կզնաս Բուխարա մեղրեսում սովորելու, այնտեղ
դու ես քո շորերը լվանալու:

Բիրի-խալիֆայի հետեւում, պատնիպեր նույնպես
մի յերկար փայտ էր կանգնած: Սակայն յես չտեսա,
վոր նա այդ փայտով ծեծէր վորեւէ մեկին: Յեթէ աչա-
կերտուէին վատ էր պատասխանում, բիրի-խալիֆան
չթից կամ բյազից կարած իր խալաթի յերկար ու
յայն թեւքով խփում էր նրա յերեսին: Դա վոչ մի դավ
չէր պատճառում, վոնց վոր մարդու յերեսին մի թեթև
քամի փչի:

Բիրի-խալիֆայի աչակերտուէիները (բացի ին-
ձանից այնտեղ բոլորն աղջիկներ էյին) վատ խաղեր
չէյին խաղում և կռիվներ չէյին սարքում: Սպիտակե-
ղենը լվանալիս կամ բակը մաքրելիս յերբեմն աղջիկ-
ները գաղտնի տիկնիկ էյին խաղում, խեցիների մեջ
ավազից կերակուր էյին «յեփում», տիկնիկային հար-
սանիքներ էյին սարքում:

Ինձ համար նույնպես մի տղա տիկնիկ չինեցին և
իմ տիկնիկս ամուսնացրին իրենց տիկնիկների հետ:
Բանի վոր իմ տիկնիկից բացի տղա տիկնիկ չկար, ուս-
տի յերբեմն նրան տաս-տասներկերկու կին էյին տա-
լիս:

Ճիշտն ասած այդ խաղն ինձ շատ էր դուր գալիս:
Բայց յերբեմն աղջկերքը դժտություն էյին մտցնում
իրենց տիկնիկների մեջ, վորոնք բոլորն էլ կնության
էյին յեկել իմ տիկնիկին և իմ տիկնիկը հաճախ ստիպ-
ված էր լինում իր կանանցից մի քանիսին ապահար-
դան տալ: Այդպիսի դեպքերում ինչվոր բան ծանրա-
նում էր սրտիս վրա: Յես վորոչեցի, վոր յերբ մեծա-
նամ, նույնիսկ յերկու կին էլ չեմ առնելու, թէյեմ դա
թուլյատրվում և մուսուլմանական որենքով:

VIII

Յես չարունակում էյի հաճախել բիրի-խալիֆայի
գարտը: Արդեն նրա հետ կարդացել վերջացրել էյի

Խաֆայակը, մի գիրք, վորի մեջ յերեխաների համար հավաքել են Ղուբանի ամենակարճ գլուխները: Այդ գրքից մի քանի գլուխ անդիր արի, կարդացի նաև բանաստեղծ Հաֆիզի վոտանավորներից մի քանիսը: Յեւ աշուճամենայնիվ յես մնացի անգրագետ—յես կարողանում եյի կարդալ միայն այն, ինչ սովորեցրել եր Բիրիխալիֆան: Որինակ, Հաֆիզի բանաստեղծութունը, վորը յես սովորել եյի դպրոցում, ամեն տեղ կարող եյի կարդալ ինչ ձեռագրով ել վոր գրած լիներ: Մինչդեռ նրա մյուս բանաստեղծութունները, վորոնք դպրոցում չեյի սովորել, չեյի կարողանում նույնիսկ գրքից կարդալ:

Գրել յես բոլորովին չեյի կարողանում:

Վերջի վերջո հայրս ինձ վերցրեց Բիրիխալիֆայի դպրոցից և ուսման տվեց իրեն՝ քաթիբին:

Այդ ժամանակ յես արդեն տասը տարեկան եյի:

Բայց դեռ մինչ այդ հայրս սովորեցրեց ինձ այբուբենով հաշվելը: Նա ինձ հետ պարապում եր ամեն յերեկո: Սկզբում նա ինձ սովորեցրեց տառերն արտասանելը: Հետո սովորեցի թե ինչպես պետք է տառերն իրար հետ կարդալ: Յերբ յես այդ ել սովորեցի, հայրըս բացատրեց, վոր յուրաքանչյուր տառը միաժամանակ վորեվե թիվ ե,— ալիֆը—մեկ, բն—յերկու, ջիմը—յերեք, դալը—չորս, դալը—հինգ:

Մի ամսում նա ինձ սովորեցրեց ամբողջ այբուբենի տառերի թվային նշանակութունը սկզբից մինչև վերջ: Ապա սկսեց հաշիվներ անելը սովորեցնել: Սկզբում յես սովորեցի միավորները, ապա տասնավորները, հարյուրավորները—մինչև հազարներ:

Յերբ այդ բոլորն արդեն անցել եյի, հայրս ասաց.

— Հիմի յես քեզ մի շատ հետաքրքիր բան ել կսովորեցնեմ: Ահա իննը թիվ և մի գերո—այդ բանը Հնդկաստանի գիտնականներն են հնարել: Այդ ինը թիվով և մեկ գերոյով աշխարհում ամեն ինչ կարելի յե հաշվել:

Յես շատ դարձացա և ուզում եյի իմանալ թե այդ

վոնց ե լինում: Ախր վոնց կարելի յե տասը նշանով
հաշվել ամբողջ աշխարհը, դա իսկի հավատալո՞ւ բան
ե: Ինձ ել ահա տասը մատ ունեմ, բայց յերբ յես
ուղեցի նրանցով հաշվել շարթվա որերը, մի քանի ան-
գամ խառնեցի հաշիվը:

Սկսեցի խնդրել հորս, վոր նա ինձ շուտ սովորեցնի
այդ տասը կախարդական նշանները:

Հայրս դորժի անցավ:

Սկզբում նա ինձ հերթով ցույց տվեց բոլոր իննը
թվերը: Ամեն որ նա մի նոր թվանշան եր ավելացնում
իմ սովորածին, իսկ բոլորից վերջում ինձ ցույց տվեց
զերոն: Հետո բացատրեց, թե ինչպես մեկից և զերո-
յից ստացվում է տասը, յերկուսից և զերոյից —
քսան: Դա բոլորովին ել դժվար բան չեր:

Յերբ յես հաշվելը սովորեցի, հայրս ասաց ինձ:

— Դու այսպիսի բաներ սովորեցիր, վոր մեր գյու-
ղում վոչ վոք չգիտի: Ինչ վերաբերում է տառերով
հաշիվ անելուն, դա նույնիսկ գյուղի ուսուցիչն ել
չգիտի, վորն առաջ սովորեցնում եր քեզ:

Շուտով պատահեց մի դեպք, վորից հետո յես իս-
կապես կարող եյի հպարտանալ իմ գիտելիքներով:

Այսպիսի մի դեպք եր:

Ինչ-վոր ժամանակ մեր գյուղում ապրած մի սրբի
գերեզմանի վրա տոնեցին նոր տարին: Հարևան գյուղե-
րից բազմաթիվ հյուրեր եյին յեկել: Սկսվեց ըմբշամար-
տը: Բաժանվեցին յերկու խմբի: Կենտրոնում մի ազատ
հրապարակ թողեցին: Հայրս իր խմբով նստել եր հրա-
պարակին շատ մոտ, իսկ յես՝ նրա կողքին: Յերկու կող-
մերից առաջ եյին գալիս «փահլեվանները» (ըմբիչ),
կոխ եյին բռնում, ուժեղները տապալում եյին թույլե-
րին: Սկզբում հակառակորդներից վոչ մեկին չհաջողվեց
փայր-գցել մերոնցից մեկն ու մեկին: Մեր գյուղը հաղ-
թող դուրս յեկավ:

Բայց ահա հակառակորդ խմբից առաջ յեկավ մի
յերիտասարդ, վորը սովորել եր Բուխարայում (նրան

մոլլա-բաչա եյին կոչում) : Նրան կանչեցին կո՛վի բըռ-
նըվելու մեր տղերքից մեկի հետ, վորը հենց այդ ժա-
մանակ տապալել էր հակառակորդ փահլեվանին :

Մեր ըմբիշն առանց յերկար-բարակ մտածելու վրա
հասավ և բռնվեց այդ մոլլա-բաչայի հետ : Բայց մոլ-
լա-բաչան շատ արագությամբ փայր գցեց նրան :

Մեր կողմից մի յերիտասարդ ել դուրս յեկավ և
նույնպես մարտի հրավիրեց մոլլա-բաչային : Բայց ըստ
յերևույթին նա մոլլա-բաչային շատ հզոր թվաց, վո-
րովհետև նա ասաց .

— Վո՛չ, յես դրա հետ կոխ չեմ բռնի : Դա չորան
է, խի յես՝ գիտուն : Յեթե գիտունը չորանի հետ կոխ
բռնի, դա սոորացում կլինի գիտունների համար :

Հայրս լսեց դա և խիստ զայրացավ : Նա վեր կացավ
տեղից, բռնեց կոնատակերիցս և սարավ կանգնեցրեց
հրապարակի կենտրոնում ու իր մոտ կանչեց մոլլա-
բաչային : Սա մոտեցավ և հարցրեց .

— Ի՞նչ էք ասում :

— Դուք ո՞վ էք, գիտո՞ւն թե փահլեվան :

— Յես գիտուն — ըմբիշտ եմ, — պատասխանեց
մոլլա-բաչան :

— Յեթե դուք գիտուն էք, — ասաց հայրս, — ապա
առանց նրա պատիկությանն ուշադրություն դարձնելու
բռնվեցեք իմ ութ տարեկան յերեխայի հետ : Թող մար-
դիկ տեսնեն դուք իսկասլե՞ս գիտուն էք : Իսկ յեթե դուք
փահլեվան էք, բռնվեցեք այն տղայի հետ, վորը ձեզ
կոխի հրավիրեց, — նա իրեն տարիքով ել, հասակով ել
հավասար է ձեզ : Թող մարդիկ տեսնեն, թե ով է ձե-
զանից ուժեղ : Դե՛հ, ուրեմն, առաջ յեկեք նախ տես-
նենք ձեր գիտությունը :


Յեվ հայրս դարձավ ինձ .


— Դե, բալե՛ս, դրան մի վորևե բան հարցրու այր-
բենական թվերից, տեսնենք :

Յես առանց մտածելու հարցրի .

— «Տեն» ինչքան է :

Մոլլա-բաչան լսեց, ակներև էր, վոր վոչինչ չէր





կարողանում պատասխանել: Այն ժամանակ Հայրս
ասաց ինձ.

Դու ինքդ ասա, թե «տեն» ինչքան ե:

— Չորսհարյո՛ւր,— պատասխանեցի յես բարձրա-
ձայն:

Հայրս սկսեց հարց-հարցի հետեւից տեղալ՝ «ե՞ս
ինչքան ե» «ե՞ս ինչքան ե», բայց մոլլա-բաջան վոչմի
հարցի չկարողացաւ պատասխանել: Դրանից հետո Հայ-
րս նույն հարցերը տվեց ինձ և յես պատասխանեցի:

— Ա՛յ, ա՛յ, ա՛յ,— բացականչեցին մերոնք գլուխ-
ները ծաղրանքով որորելով: Մոլլա-բաջան ամոթից
կարմրել եր: Հայրս ասաց.

— Ձեր գիտունությունը փուչ դուրս յեկաւ: Հիմի
կարող եք կոխ բռնել մեր տղի հետ, ինչպես չորանը՝
չորանի հետ:

Յեւ մոլլա-բաջան սախլված համաձայնեց: Ըմ-
բըշամարտն սկսեց, և հենց վոր ըմբիչները իրար բռնե-
ցին՝ «գիտունը» գետին շարտվեց: Հրապարակի շուրջը
աղմկեցին, սուլեցին, ծափահարեցին: Ըմբշամարտը
վերջացաւ:


Տուն գնալիս մեր խմբի տղերքն ասացին հորս.

— Ճիշտն ասած եդ «գիտնահանին» քո յերեկոան
գետնին խփեց, քանի վոր վեճի մեջ հաղթվելուց հետո
նա ամոթից կոխ բռնելն ել մոռացաւ:

Յես անշափ հպարտանում եյի իմ այդ հաջողու-
թյունով: Ինձ թվում եր, վոր հավանաբար յես յուրաց-
րել եմ լքուրը գիտությունները: Մինչդեռ իրականում
յես դեռևս անգրագետ եյի:


Մրանով յես վերջացնում եմ իմ պատմվածքն այն
մասին, թե ինչպես յես սովորեցի նախնական դպրո-
ցում: Իսկ այն մասին, թե յես ինչպես դարձա գրա-
գետ, ինչպես դարձա գրող, այդ մասին մի ուրիշ ան-
գամ կպատմեմ:







Գալլիտի լիազոր՝ ն—9277. Հրատ. 4243. Պատվեր 1085.
Տերած 4000. Թուղթ 62×94. Տպ. 4 մամ. Մեկ մամ. 30.726 նիշ-
Հեղինակային 3 մամուլ:

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ. ԼԵՆԻՆԻ ՓՈՂ. 65





6076



ԳԻՆԵ 1-ր.

23

11
2188

Ս. ԱՅՆԻ
ՏԱՐՅՒՅՄ ԱՄԱՆԱԿ
ԳԻՅ ԱՐՄ. ՍՍՐ ԵՐԵՎԱՆ

Գրք. 1940





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0005803

ЦЕНА

11
11
21882